

ըլլայ դերակատարներու, ըլլայ բեմադրութեան տեսակէտով:

Բայց հիմնուելով այն փաստին վրայ, թէ Հայաստանի մէջ ներկայացումները կը տըրւէին յոյն լեզուով, յոյն դերասաններով եւ առաւելագէտ հելլէն հեղինակներու գործերէն, պէտք կ'ըլլայ ենթադրել, որ հելլէն թատերական արուեստն էր, որ թօն կուտար Հայաստանի մէջ ալ:

Ու պատմութենէն գիտենք, որ նախապէս հելլէն դերասանները չճանչցուելու համար երեսներն մուրով ու նոյն իսկ ձիւթով կը ծեփէին: Յետոյ էր, որ հելլէն թատրոնին մեծագոյն վարպետը, Նսքիդէս, երբ իր հռչակաւոր ողբերգութիւնները գրեց, պատուիրեց որ դերասանները գիմակ անցընեն, որով կը ճանչցուէր այն աստուածը կամ գլխաւոր անձը, զոր կը ներկայացնէին: Ան լայն պծղնաւոր հանդերձ մըն ալ հրամայեց որ հագնին դերասանները, եւ ոտքերնին անցընեն բարձր կոշիկներ, աւելի վայելչութիւն մը ունենալու համար. մանաւանդ որ շատ անգամ խաղատեղին հեռուն կ'իյնար հանդիսականներուն բազմութեանը պատճառով, եւ հարկ էր, որ դերասանները աւելի մեծ երեսնային՝ չկորսնցնելու համար բնականութիւնը: Ու այդ էր հաւանաբար դերակատարներուն ծպտումը Հայաստանի մէջ ալ:

Գլխաւոր ապացոյցը նոյն ինքն Պլուտարքոս կուտայ, երբ կը նկարագրէ «Բակղոսեանք» ողբերգութեան ներկայացումը Հայաստանի արքունիքին մէջ Բակղոսի հարսնիքին ատեն: Ան կը պատմէ, թէ Յասուլն, գլխաւոր դերակատարը խաղին, Պանթէոսի գիմակը կը կրէր, զոր հանեց դէմքէն եւ պարերգուներէն մէկուն տուաւ, երբ Կրասոսի գլուխը թատրոն բերին:

ՊԱՐԵՐԳՈՒՆԵՐԸ

Պարն ալ պէտք է անհրաժեշտ մասը կազմած ըլլայ հին Հայաստանի ներկայացումներուն, ինչպէս էր յունական ողբերգութեանց մէջ, որովհետեւ պարերգուները կը սեպուէին միջնորդ աստուածներուն եւ մարդոց միջեւ: Անոնք խաղացողներուն կիրքերը կը հանդար-

տեցնէին, կը մխիթարէին զանոնք, կը քաջաւերէին եւ կը հրահրէին:

Պարը կազմող անձերը կամ ծերունիներ եւ կամ մանկամարդ կոյս աղջիկներ կ'ըլլային: Ի սկզբան բազմաթիւ կ'ըլլային անոնք, մինչեւ 50 հոգի. բայց ի վերջոյ անոնց թիւը 15-էն պակաս կ'ըլլար:

Աւելցնենք որ պարը կը բաժնուէր երկու մասի, որոնց երկուքն ալ իրենց պարագլուխը (coriphe'e) ունէր՝ բայց երկուքին վրայ ուրիշ պարապետ մըն ալ կար (xopssyo's): Պարերգութեան սկզբնաւորութիւնը կամ ինքը եւ կամ միւս երկու պարագլուխները կ'ընէին. իսկ քնարական մասը ամէնքը միատեղ կ'երգէին՝ ձայնական երաժիշտներուն ընկերակցութեամբ:

Գարձեալ գիմենք Պլուտարքոսին՝ Բակղոսի հարսնիքի նկարագրութեան: Երբ Կրասոսի գլուխը թատրոն բերին, Յասուլն, գլխաւոր դերակատարը, — կ'ըսէ Պլուտարքոս, — հանեց երեսէն Պանթէոսի գիմակը, եւ պարաւորի մը ձեռքը տուաւ: Ու քիչ մը վերջը կը պատմէ դարձեալ, թէ պարերգուները եւ պարապետը կատարեցին փոխասացութիւնը, որ իրենց գերն էր: «Ո՞վ սպաննեց զայն» հարցուցին պարերգուները, ու «Մրցանակն ի՞մն է» պատասխանեց Ագաղէ:

ԹԱՏՐՈՆԻ ՇԷՆՔԸ

Ստոյգ բան մը չենք գիտեր դարձեալ թատրոնի շէնքին մասին: Գիտենք միայն, որ թատրոնի շէնքեր կային Արտաշատի եւ Տիգրանապոլիսի մէջ:

Անցեր էր արդէն այն շրջանը, երբ հին հելլէն ողբերգութիւնները կը ներկայացուէին արտերու մէջ եւ կառքերու վրայ: Արդէն փայլած էին Նսքիդէս, Սոփոկլէս եւ Եւրիպիդէս, եւ Դիոնեսիոս իրեն նուիրուած արձանը ունէր արդէն Աթէնքի մէջ, Ակրոպոլիսի հարաւարեւելեան զառիվայրին վրայ, այնքան ընդարձակ, որ հոն կարող էին նստիլ Աթէնքի բնակչութեան բոլոր ազատ արուները: Հոն էր, որ տարին երկու անգամ կը ներկայացուէին յունական ողբերգութեան գլուխ գործոցները, որոնք քանի մը օր կը տեւէին: Պետական զանձը կը վճարէր մուտքը չքաւոր քաղաքացիներուն: